ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին

ԵԴ2/9090/02/25 քաղ. Երևան
4 Սեպտեմբերի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «Ամիրխանյան Ճին» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

«Ամիրխանյան Ճին» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀ Սպիտակի համայնք ՀԿՀ-ի՝ Սպիտակի համայնքապետարանի և «Ամիրխանյան Ճին» ՍՊԸ-ի միջև 09.08.2022թ. կնքված թիվ ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/19-1 ծածկագրով գնման պայմանագրի հիման վրա պայմանագրի գնի չվճարված մասը՝ 23.753.950 ՀՀ դրամը «Ամիրխանյան Ճին» ՍՊ ընկերությանը վճարել Սպիտակի համայնքապետարանին պարտավորեցնելու և իր պարտավորությունը ժամանակին չկատարելու համար պայմանագրով նախատեսված տույժը՝ 6.853.029 ՀՀ դրամը վճարելու պահանջների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, ՀՀ Սպիտակի համայնք ՀԿՀ-ից պետք է պահանջել դատարան ներկայացնել Սպիտակի համայնքապետարանի և «Ամիրխանյան Շին» ՍՊԸ-ի միջև 09.08.2022թ. կնքված թիվ ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/19-1 ծածկագրով գնման պայմանագրի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«Ամիրխանյան Շին» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ Սպիտակի համայնք ՀԿՀ-ի՝ Սպիտակի համայնքապետարանի և «Ամիրխանյան Շին» ՍՊԸ-ի միջև 09.08.2022թ. կնքված թիվ ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/19-1 ծածկագրով գնման պայմանագրի հիման վրա պայմանագրի գնի չվճարված մասը՝ 23.753.950 ՀՀ դրամը «Ամիրխանյան Շին» ՍՊ ընկերությանը վճարել Սպիտակի համայնքապետարանին պարտավորեցնելու և իր պարտավորությունը ժամանակին չկատարելու համար պայմանագրով նախատեսված տույժը՝ 6.853.029 ՀՀ դրամը վճարելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2.ՀՀ Սպիտակի համայնք ՀԿՀ-ից պահանջել դատարան ներկայացնել Սպիտակի համայնքապետարանի և «Ամիրխանյան Շին» ՍՊԸ-ի միջև 09.08.2022թ. կնքված թիվ ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/19-1 ծածկագրով գնման պայմանագրի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը ՀՀ Սպիտակի համայնք ՀԿՀ-ի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան Digitally signed by